

Զանգվածային լրատվամիջոցներում հաճախակի հնչող հարցեր և պատասխաններ

Հարց. Ի՞նչ է ՄՊՎ-ն:

Պատասխան. Մարդու պահլումավիրուսը կամ ՄՊՎ-ն տարածված վիրուս է, որը փոխանցվում է մաշկ-մաշկ շփման միջոցով, այդ թվում սեռական օրգանների մաշկի միջոցով: ՄՊՎ-ով վարակված անձանց մեծամասնության մոտ հիվանդությունն ընթանում է առանց որևէ ախտանշանների: ՄՊՎ վարակը մեծամասամբ ոչնչացվում է օրգանիզմի կողմից առաջին մի քանի տարվա ընթացքում, իսկ «կայուն» չոչնչացված վարակը կարող է հանգեցնել արգանդի պարանոցի քաղցկեղի առաջացմանը:

Հարց. Ի՞նչու են անհրաժեշտ ՄՊՎ-ի դեմ պատվաստանյութերը:

Պատասխան. ՄՊՎ-ի դեմ պատվաստանյութերը անհրաժեշտ են, քանի որ դրանք զգալիորեն նվազեցնում են արգանդի պարանոցի քաղցկեղի առաջացման հավանականությունը, որը հանդիսանում է զարգացող երկրներում կանանց շրջանում քաղցկեղից մահվան հիմնական պատճառը:

Հարց. Արդյո՞ք ՄՊՎ վարակը պարտադիր հանգեցնում է արգանդի պարանոցի քաղցկեղի :

Պատասխան. Ոչ: ՄՊՎ վարակը մեծամասամբ ոչնչացվում է օրգանիզմի կողմից առաջին մի քանի տարվա ընթացքում: Բազմաթիվ ՄՊՎ վարակներից միայն մի քանիսը կարող են հանգեցնել արգանդի պարանոցի քաղցկեղի, եթե նրանք չեն ոչնչացվել օրգանիզմի կողմից և արդեն գոյատևում են 10-20 տարի: ՄՊՎ վարակների խմբին դասվող 16 և 18 տեսակները հանդիսանում են արգանդի պարանոցի քաղցկեղի 10-ից 7 դեպքերի առաջացման պատճառը: Այս երկու ՄՊՎ վարակների տեսակները կարելի է կանխարգելել ՄՊՎ պատվաստման միջոցով, հետևաբար այս պատվաստանյութը կարող է կանխել արգանդի պարանոցի քաղցկեղով հիվանդացության 70%, եթե այն տրվում է ժամանակին: Ի լրումն, ՄՊՎ վարակով տառապող կականց շրջանում արգանդի պարանոցի քաղցկեղը հնարավոր է կանխարգելել, եթե նրանք պարբերաբար հետազոտվում են և ստանում անհրաժեշտ բուժում: Եթե 30-49 տարեկան կանանց մոտ կայուն ՄՊՎ վարակի հետևանքով արգանդի պարանոցի բջիջներն ենթարկվում են փոփոխության (նախաքաղցկեղային), ապա սկրինինգի և համապատասխան բուժման պարագայում արգանդի պարանոցի քաղցկեղի հետևանքով մահվան դեպքերի թիվը կտրուկ կնվազի՝ նույնիսկ ՄՊՎ վարակի առկայության դեպքում:

Հարց. Որքանո՞վ է տարածված ՄՊՎ-ի հետևանքով առաջացած արգանդի պարանոցի քաղցկեղը:

Պատասխան. ՄՊՎ-ն հանդիսանում է արգանդի պարանոցի քաղցկեղի առաջացման հիմնական պատճառը: Տարեկան ախտորոշվում է արգանդի պարանոցի քաղցկեղի 528 000 դեպք: Արգանդի պարանոցի քաղցկեղի հետևանքով մահացող 266 000 կանանց մեծամասնությունը բնակվում է զարգացող երկրներում:

ՄՊՎ-ի դեմ պատվաստանյութերի մասին

Հարց. Արդյո՞ք ՄՊՎ-ի դեմ պատվաստումը կկանխարգելի իմ աղջկա մոտ արգանդի պարանոցի քաղցկեղի առաջացումը:

Պատասխան. Այո: ՄՊՎ պատվաստանյութերը կանխարգելում են ՄՊՎ 2 տեսակի վարակները, որոնք հանգեցնում են արգանդի պարանոցի քաղցկեղի: Պատվաստված կանանց նույնպես խորհուրդ է տրվում տարիներ անց հետազոտվել արգանդի պարանոցի քաղցկեղի նկատմամբ:

Հարց. Որո՞նք են ԱՀԿ-ի կողմից նախատրակավորում ունեցող ՄՊՎ-ի դեմ առկա պատվաստանյութերը:

Պատասխան. ԱՀԿ-ի կողմից նախատրակավորում ունի ՄՊՎ-ի դեմ երկու պատվաստանյութ՝ Cervarix® (GlaxoSmithKline-ի արտադրություն) և Gardasil® կամ Silgard® (Merck-ի արտադրություն):

Հարց. Ինչո՞վ են նման այս երկու ՄՊՎ-ի դեմ պատվաստանյութերը:

Պատասխան. Երկու պատվաստանյութերն էլ պաշտպանում են արգանդի պարանոցի քաղցկեղի դեպքերի 70 %-ից (քանի որ այդ երկու պատվաստանյութերն էլ ուղղված են ՄՊՎ 16 և 18 տիպերի կնխարգելմանը): Երկու պատվաստումներն էլ անվտանգ են: Երկուսն էլ չեն կարող լինել հիվանդության պատճառ, քանի որ դրանք չեն պարունակում կենդանի վիրուսներ:

Երկու պատվաստումներն էլ ներմուծվում են ներարկման միջոցով և պահանջվում են 2 դեղաչափով մինչև 15 տարեկան դեռահասների համար և 3 դեղաչափով իմունային անբավարարությամբ (այդ թվում ՄԻԱՎ-ով վարակվածներ) և 15 տարեկանից բարձր անձանց համար:

Հարց. Ովքե՞ր են ենթակա պատվաստման:

Պատասխան. Համաձայն ԱՀԿ-ի մոտեցման պատվաստման ենթակա են 9-13 տարեկան դեռահասները: Պատվաստումը խորհուրդ չի տրվում մինչև 9 տարեկան երեխաներին:

Հարց. Ո՞րն է առաջարկվող ժամանակացույցը երկդեղաչափ ՄՊՎ պատվաստման համար:

Պատասխան. Երկդեղաչափ պատվաստումը (ներարկում) առաջարկվում է 15 տարեկանից փոքր դեռահասների համար, երկրորդ դեղաչափը ստանում են առաջին դեղաչափը ստանալուց 6 ամիս հետո: Պատվաստանյութ տրամադրողը տեղեկացնում է պատվաստված աղջկան (և նրա ծնողներին) նրա վերջնական պատվաստման ժամկետի վերաբերյալ: Գոյություն չունի առավելագույն ընդմիջում երկու պատվաստումների միջև, այնուամենայնիվ խորհուրդ է տրվում, որպեսզի այդ ընդմիջումը չգերազանցի 12-15 ամիս: Եթե երկու դեղաչափերի միջև ընդմիջումը 5 ամսից փոքր է, ապա 3-րդ դեղաչափը պետք է ստանա առնվազն առաջին դեղաչափը ստանալուց 6 ամիս հետո:

Հարց. Ո՞րն է առաջարկվող ժամանակացույցը երեք դեղաչափով ՄՊՎ պատվաստման համար :

Պատասխան. Երեք դեղաչափով ՄՊՎ պատվաստման դեպքում (այսինքն 15 տարեկան և բարձր, ինչպես նաև իմունային անբավարարությամբ և/ կամ ՄԻԱՎ-ով վարակված դեռահասների համար, անկախ նրանից ստանում են նրանք հակառետրովիրուսային թերապիա, թե ոչ), երկրորդ դեղաչափը պետք է ստանան առաջին պատվաստումից 1 կամ 2 ամիս անց (կախված պատվաստանյութի տեսակից), իսկ երրորդը՝ առաջին պատվաստումից 6 ամիս անց: Պատվաստանյութ տրամադրողը պետք է տեղեկացնի պատվաստված յուրաքանչյուր աղջկա (և նրա ծնողներին) նրա վերջնական պատվաստման ժամկետի վերաբերյալ: Նախքան ՄՊՎ պատվաստում ստանալը ՄՊՎ և ՄԻԱՎ վարակի հետազոտության անհրաժեշտություն չկա:

Հարց. Արդյո՞ք ՄՊՎ պատվաստանյութերը կարող է բուժել ՄՊՎ վարակը կամ արգանդի պարանոցի քաղցկեղը, եթե, պատվաստումը ստանալու պահին, տվյալ աղջկա մոտ առկա է ՄՊՎ:

Պատասխան. Ոչ: ՄՊՎ պատվաստանյութը չի կարող բուժել ՄՊՎ վարակը, չի կարող բուժել նաև արգանդի պարանոցի քաղցկեղը կամ նախաքղցկեղային վիճակները, ինչպես նաև կանխարգելել ՄՊՎ-ով վարակված կանանց մոտ հիվանդության զարգացումը:

Հարց. Արդյո՞ք 30-49 տարեկան կինը կարիք ունի նախաքղցկեղային և քաղցկեղային հետազոտության, նույնիսկ եթե նա ստացել է պատվաստման բոլոր դեղաչափերը մինչև սեռական կյանք սկսելը :

Պատասխան. Այո: Կանանց 30-49 տարեկանում խորհուրդ է տրվում պարտադիր կերպով անցնել արգանդի պարանոցի հետազոտություն, նույնիսկ եթե նրանք նախկինում պատվաստվել են: Չնայած պատվաստանյութը շատ արդյունավետ է, բայց այն չի կանխարգելում արգանդի պարանոցի քաղցկեղի առաջացման պատճառ հանդիսացող ՄՊՎ վարակի բոլոր տիպերը:

Հարց. Կարո՞ղ է ՄԻԱՎ-ով վարակված դեռահասը պատվաստվել:

Պատասխան. Այո: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՄՊՎ պատվաստանյութը ապահով է ՄԻԱՎ-ով վարակված դեռահասների համար: ՄԻԱՎ-ով

վարակված կամ իմունային անբավարարությամբ տառապող դեռահասները պետք է ստանան ՄՊՎ պատվաստանյութը երեք դեղաչափով 0, 1-2 և 6 ամսից, անկախ նրանից լրացել է նրանց 15 տարեկանը թե ոչ:

ՄՊՎ-ի դեմ պատվաստմանը վերաբերող ընդհանուր մտահոգություններ

Հարց. Արդյո՞ք ՄՊՎ պատվաստումները անվտանգ են և արդյունավետ:

Պատասխան. Այո: Զարգացած և զարգացող երկրներում բազմաթիվ հետազոտությունների արդյունքում ապացուցվել է այդ երկու պատվաստանյութերի անվտանգությունը և արդյունավետությունը: Երկու պատվաստանյութերն էլ կիրառվել են միլիոնավոր դեռահասների և կանանց շրջանում ամբողջ աշխարհում, և ընթացել է առանց որևէ կողմնակի բարդությունների: Մյուս պատվաստանյութերի հետ մեկտեղ, այս պատվաստանյութի անվտանգությունը մշտադիտարկվել է շատ մանրակրկիտ: Ներարկման հատվածում կարող է դիտվել ցավ և կարմրություն, ջերմություն, գլխացավ և սրտխառնոց: Երբեմն ՄՊՎ (կամ որևէ այլ) պատվաստման ժամանակ դեռահասները կորցնում են գիտակցությունը, այդ իսկ պատճառով պատվաստում ստացող դեռահասներին պետք ուշադիր լինեն պատվաստումից հետո 30 րոպեի ընթացքում, եթե նրանք կորցնում են գիտակցությունը, ապա նրանց պետք է պառկեցնել, վնասվածքներից խուսափելու նպատակով:

Հարց. Ինչու՞ են կորցնում գիտակցությունը ՄՊՎ պատվաստանյութը ստանալուց հետո:

Պատասխան. Երիտասարդները սովորաբար հակված են լինում ուշագնացության ցանկացած բժշկական պրոցեդուրայից հետո այդ թվում պատվաստումներից, քանի որ նրանք սովորաբար շատ են նյարդայնանում նախքան պատվաստումը: Ուշագնացություններից և վնասվածքներից խուսափելու համար, հետևեք, որպեսզի պատվաստվողը նստած լինի պատվաստման ընթացքում, ինչպես նաև պատվաստումից հետո 30 րոպեի ընթացքում:

Հարց. Իմ աղջիկը չափազանց երիտասարդ է սեռական հարաբերությունների համար: Ինչու՞ է ՄՊՎ պատվաստումը խորհուրդ տրվում այդքան երիտասարդ տարիքում:

Պատասխան. ՄՊՎ պատվաստանյութի արդյունավետությունը բարձրացնելու համար, շատ կարևոր է, որպեսզի դեռահասները ստանան այդ պատվաստումը՝ նախքան սեռական կյանք սկսելը:

Հաճախ տրվող հարցեր

Դեռահաս աղջիկը կարող է վարակվել ՄՊՎ-ով, նույնիսկ առաջին սեռական հարաբերությունից հետո (նույնիսկ մաշկ-մաշկ շփման, այդ թվում սեռական օրգանների մաշկի միջոցով): Բացի այդ, հետազոտությունները ցույց են տվել, որ

ՄՊՎ-ի դեմ պատվաստանյութն ավելի արդյունավետ է երիտասարդ տարիքում քան, երբ տրվում է մածահասակների շրջանում: Պատվաստանյութը չի կարող բուժել արդեն իսկ ՄՊՎ վարակով վարակված աղջկան:

Հարց. Չի ազդի արդյո՞ք պատվաստանյութը իմ աղջկա պտղաբերության վրա: Չի առաջացնի արդյո՞ք դա խնդիրներ հղիանալու կամ հղիությունը մինչև վերջ պահպանելու համար:

Պատասխան. Ոչ: Չկա ապացույց, որ ՄՊՎ-ի դեմ պատվաստանյութը ազդի աղջկա ապագա պտղաբերության վրա կամ առաջացնի հետագա հղիության հետ կապված որևէ խնդիր:

Հարց. Արդյո՞ք իմ աղջկա, լիովին պաշտպանված լինելու համար, անհրաժեշտ է ստանալ ՄՊՎ-ի դեմ պատվաստանյութը ամբողջ առաջարկված չափաբաժիններով: Արդյո՞ք մեկ չափաբաժինը բավարար չի լինի:

Պատասխան. Ինչպես շատ ուրիշ պատվաստանյութեր, ՄՊՎ-ի դեմ պատվաստանյութը նույնպես պահանջում է մեկից ավելի ներարկում: Բոլոր առաջարկվող չափաբաժինները չստանալու դեպքում, պատվաստանյութը կարող է լիովին արդյունավետ չլինել արգանդի պարանոցի քաղցկեղի կանխարգելման համար: Կարևոր է, որպեսզի դեռահասը ստանա բոլոր չափաբաժինները և հետևի չափաբաժինների միջև նվազագույն և առավելագույն սահմանաչափերին, լիարժեք պաշտպանված լինելու համար:

Հարց. Արդյո՞ք ՄՊՎ-ի դեմ պատվաստանյութը անվտանգ է հղիության ընթացքում:

Պատասխան. ՄՊՎ-ի դեմ պատվաստանյութերը խորհուրդ չեն տրվում սեռական ակտիվ կամ հղի կանանց: Այնուամենայնիվ, ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հղիության ընթացքում ՄՊՎ-ի դեմ պատվաստանյութ ստացած արդեն մայրերի մոտ պատվաստանյութը չի առաջացրել ոչ մի խնդիր: Եթե հղիության ընթացքում կինը ստանում է ՄՊՎ-ի դեմ պատվաստանյութ, ապա դա պատճառ չէ, որպեսզի մտածեն հղիության ընդհատման մասին: Սակայն, անվտանգության նկատառումներով, ցանկալի է, որպեսզի կանայք հղիության ընթացքում չպատվաստվեն:

Հարց. Առկա է արդյո՞ք պատվաստվելու որևէ հակացուցում:

Պատասխան: Եթե դեռահասը ունեցել է լուրջ ալերգիկ ռեակցիա այլ պատվաստանյութի կամ ՄՊՎ-ի դեմ պատվաստանյութի նախորդ չափաբաժինը ստանալուց հետո, ապա նրա խորհուրդ չի տրվում ստանալ ՄՊՎ-ի դեմ պատվաստանյութ՝ հետագա լուրջ հետևանքներից խուսափելու համար: